

- 27 Որ յեօթնեքին աստիճանաց
Եկեղեցւոյ ուխտի մանկանց,
Վաղ իսկ ըզնորսն, ըստ տիրացուաց,
Ընկալեալ էր ընդ այլ դպրաց:
- 29 Եւ արդ Լքեալ նորուն ձեռաց
Զասկի, զարծաթ, կոյտ գոհարաց
Զօվաճառ, հանութ փարթամ արդեանց,
Զողջ վաճառեալ ի դրամ փոխեաց:
- 29 Զորոյ ըզկէսն հօր իւր յանձնեաց,
Զի ի նմանէ էր ընկալած,
Զերթ մայր դրամոց իւր վաճառաց,
Միւս կէսն ինքեան վաստակ մընաց:
- 30 Ետոյ ասէր յոյժ համարձակ,
Իբր առնելով զիւր բուն կտակ,
Մնասջիք բարեաւ առհասարակ
Ով սիրելիք իմ անքատակ:
- 31 Զի թէպէտ եմ մեծահասակ,
Այլ յարեմ զիս մանկան գունակ
Ի նորավարժ համբակաց կարգ,
Զորս արդ մարդէ մեր Պատրիարգ:
- 32 Թողեալ ահա զերկրի վաստակ,
Զօջայր, մայր եւ տուն, վաճառ, կրպակ
Յանկամ լինել գրոց համբակ,
Որոց շահն է գանձ անքանակ:
- 33 Ճեմեալ ուղիղ ուս շարունակ
Ըղձամ ջանիւ գոլ հետեւակ,
Յարդ ըմպողաց զԲանին բաժակ,
Թէեւ չեմ այժմ բաւ ընդունակ: